ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

(օրենքն ուժը կորցրել է 14.11.2024 թվականին, բացառությամբ 39-րդ հոդվածի՝ 24.10.24 ՀՕ-414-Ն օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն)
(24.10.24 ՀՕ-414-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 39. Սոցիալական աշխատանքի մասնագետը

1. Սոցիալական աշխատողը «Սոցիալական աշխատանքի» բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեություն իրականացնող անձն է:

2. Սոցիալական աշխատող կարող է լինել նաև այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած անձը, որն ունի սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:

3. Սոցիալական սատարողը «Սոցիալական աշխատանքի» միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական սատարողի մասնագիտական գործունեություն իրականացնող անձն է:

4. Սոցիալական սատարող կարող է լինել նաև այլ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և (կամ) «Սոցիալական սատարողների համար նախատեսված»~~«Սոցիալական աշխատանք» մասնագիտության~~ հատուկ դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած անձը:

(39-րդ հոդվածը փոփ. 06.12.17 ՀՕ-229-Ն)

(հոդվածն ուժը կորցնում է սոցիալական աշխատողների և սոցիալական սատարողների հավաստագրման կարգն ուժի մեջ մտնելուց 18 ամիս հետո՝ 24.10.24 ՀՕ-414-Ն օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն)

(24.10.24 ՀՕ-414-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ս. Սարգսյան**

2014 թ. դեկտեմբերի 30
Երևան
ՀՕ-231-Ն